

## ԾԻՍԱԿԱՆ ՏԻԿՆԻԿԻ ՆԱՐԻՆ/ՆՈՒՐԻՆ ՄԱԿԱՆՈՒՆՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

### ԷՄՄԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հողվածում քննվում են հայոց մեջ շատ մեծ տարածում ունեցած և անձրևաբեր ծեսերում լայնորեն կիրառված ծիսական Նարին/Նուրին տիկնիկի անվանումները: Տարբեր ազգագրական գավառներում այս տիկնիկի անվանումները տարբերակային հարուստ դրսևորումներ ունեն, որոնց ստուգաբանությունն ի հայտ է բերում անվան պատմական ձևավորման գործընթացը, որոնք էլ իրենց հերթին օգնում են բացահայտելու այս տիկնիկի հնագույն, առասպելական արմատները: Մասնավորապես, ծիսական այս տիկնիկի բարբառային զանազան անվանումների ստուգաբանություններում ի հայտ է գալիս կապը ցախավելի, ծղոտե խուրձի, շերեփի, գդալի հետ, որոնք պտղաբերության և հացահատիկի հնագույն մայր աստվածուհու ցածրացված կրկնօրինակներն են:

Միևնույն ժամանակ, խոսվում է ծիսական այս տիկնիկի անվանումներում առկա այն առնչությունների մասին, որոնք ուղղակիորեն կապվում են ջրերի և ծովերի աստվածուհի Նարի կամ Ծովինարի դիցաբանական կերպարին, որը դարձյալ իր հերթին առնչվում է պտղաբերության և առատության գաղափարներին:

**Բանալի բառեր** – *երաշտ, անձրև, երթ, տիկնիկ, պարերգ, գոհաբերություն*

Երաշտը և հորդառատ անձրևները մեծ աղետ են երկրագործի և անասնապահի համար: Դրանց դեմ պայքարելու նպատակով դարերի ընթացքում ձևավորվել են բազմաթիվ ծեսեր, որոնցից մեկը վերաբերում է ծիսական տիկնիկի միջոցով հաջողության հասնելուն:

### Տիկնիկ Նարին/Նուրին

Տարբեր գավառներ ունեցել են ծեսի, տիկնիկ պատրաստելու և նրա անվանման տարբերակներ, բայց հայ ազգագրության մեջ ավանդաբար դիտարկել են *Նարին/Նուրին* անվանումը<sup>1</sup>: Ասացողները հա-

<sup>1</sup> Տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հ. Է, Եր., 1975, էջ 70-72, Վ. Հ. Բոդյան, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Եր., 1972, էջ 490-497, Մ. Թումաձան, Հայրենի երգուբան, հ. 1, Եր., 1972, հ. 2, Եր., 1983, հ. 3, Եր., 1986, Թ. Հայրապետյան, Անձրևաբեր և անձրևախափան ծեսերի երկհակադիր ընկալումների շուրջ//Պատմա-բանասիրական հանդես, № 3, Եր., 2004, էջ 217-227:

ճախ նշում են, որ տիկնիկը *Աձրնի հարս է*: Գր. Ղափանցյանը կարծում է, որ *Նարինը* ջրի աստվածուհի է, և մեջբերում է ծխական թափորի երգի թարգմանությունը. «*Нурин, Нурин пришла, / Чудная гурия пришла, / Алую рубаишку надела, / Красным поясом она опоясана, / От Бога она просит дождя, / От людей – хлеба, / Воду принесите на голову облить, / Яйцо несите в руку класть, / Масло несите смазать пуп, ... / Нашей Нурин долю несите, / (Чтоб) мы поели, попили, попирировали*»<sup>2</sup>: Շրջիկ երթի հայերեն պարերգի տարբերակն է. «*Նուրին, Նուրին էկել ա, / Աջբահուրին էկել ա, / Շիլաշապիկ հագել ա, / Կարմիր գոտիկ կապել ա: / Ձու բերեք թաթ դնենք / Եղ բերեք պորտը քսենք, / Ձուր բերեք գլխին տնենք / Երկնքի դուռը բացենք*»<sup>3</sup>:



Ս. Վ. Ամատունու բառարանում նշվում են *Նարին/Նուրին* անունը և բարբառային տարբերակները՝ *Խուշկուրուրիկ, Խուշկուրուրայ, Խուրձկուրուրու, Պուրպատիկին*: «Կարճ փայտի կամ ցախավելի վրայ հին շորեր հագուցած մարդկերպ խրճիկ կամ տիկին, որը երաշտ եղած ժամանակ դուրս են հանում, որպես զի անձրև գայ»<sup>4</sup>:

Վ. Բոդյանը մանրամասն վերլուծել է անձրևաբեր ծեսերը, իգական սեռի ջրային աստվածությունն

վածությունն *Նարին/Նուրինի* կերպարը և երթը: Հեղինակը բերում է պարերգերի *նայ-նայ, նանայ* կրկնակները և եզրակացնում է՝ *նայնար > Նուրին-ձոլին* նույնն են, ծագում են *Նայ-ից*<sup>5</sup>:

Թ. Հայրապետյանը կարծում է, որ «և՛ Գողին, և՛ Նուրինը մարդկերպ տիկնիկներ են, և հատկապես Նուրինը (փառաբանված լինելու շնորհիվ) կարող էր միջնորդ դիտվել մարդկանց և աստվածների միջև»<sup>6</sup>:

Ծեսի ավանդական պատկերը հետևյալն է: Երբ երկար ժամանակ անձրև չէր գալիս, գյուղում մի ծեր կնոջ խորհրդով աղջիկները վերց-

<sup>2</sup> Капанян Гр. Историко-лингвистические работы, т. 1, Ер., 1956, с. 256-297.

<sup>3</sup> Եր. Ղափայան, Բորչալուի գավառ // Ազգագրական հանդես, հ. X, Թիֆլիս, 1903, էջ 200-201:

<sup>4</sup> Ս. Վ. Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, հմմտ. Նուրի:

<sup>5</sup> Տե՛ս Վ. Հ. Բոդյան, նշվ. աշխ. էջ 493: Մենք չենք անդրադառնում այն վարկածին, թե Արա Գեղեցիկը, խրտվիլակ Ակլատիզը, Նարի գորտը կապ ունեն և մեռնող և հարություն առնող աստվածությունների հետ:

<sup>6</sup> Թ. Հայրապետյան, նշվ. աշխ., էջ 221:

նում էին ցախավել ու թոնրի շիշ կամ փայտիկ, կապում էին խաչաձև և հազցնում էին հարսի պես:

Տիկնիկի հիմքը սարքելու համար կան նաև գավառական այլ տարբերակներ: 1. Հազցնում են գդալը, շերեփը կամ փլավքամիչը: 2. Վերցնում են թիակը կամ բահը: 3. Խաչաձև կապում են փայտիկները: 4. Պինդ հունցած խմորից պատրաստում են տիկնիկ և թրծում: 5. Որոշ շրջաններում տիկնիկին փոխարինում է զգեստավորված աղջիկը կամ կինը: Երթի հիմնական մասնակիցները աղջիկներ են: Երկու հարսնաքույրեր աջից և ձախից բռնում են տիկնիկը, որը մասնակից է՝ «քայլում է» երթի առջևից: Երթը կարելի է համեմատել հարսանյաց թափորի հետ: Աղջիկներից մի քանիսը պատասխանատու են նվերները հավաքելու, *Նարին/Նուրինին* «կերակրելու» համար, մյուսները շքախմբով ուղեկցում են նրան, ինչպես վայել է աստվածուհուն:

Կանգ առնելով յուրաքանչյուր տան առջև՝ երեխաները երգով ազդարարում են *Նարին/Նուրինի* ծամանելը: Նա «պարում» է և նվերներ է պահանջում՝ «Ով տա՝ շեն մնա, ով չտա՝...», և հաջորդում է անպարկեշտ անեծք:

Տանտերերը պարտադիր ջուր են շաղ տալիս տիկնիկի և երեխաների վրա, նվիրում ձու, այլուր, կարագ, բլդուր, հազվադեպ՝ դրամ, որով ոչխար են գնում զոհաբերության համար:

Գյուղի բոլոր տները շրջելուց հետո երեխաները իջնում են գետի կամ հոսող ջրի ափ, պատրաստում ուտեստ և զվարճանում: Ոչինչ չէր թույլատրվում տանել տուն: Մինչև ուրախ խնջույքը տիկնիկին թովազանելով ու մերկազանելով, շորերը պատառոտելով նետում են ջուրը: Մի շարք շրջաններում տիկնիկին կանգնեցնում են գետի ափին, չարչարում, խոշտանգում, հետո սուզում ջուրը և ողբում:

### **Նարին / Նուրին անվան ստուգաբանությունը և իմաստը**

\**Nar/nur* արմատը սեմական կամ նոստրատիկ է: Ըստ Վ. Իլլիչ-Սվիտիչի՝ *nara* «կրակ», «բոց», հին. արամ. *nur* «կրակ», ասոր. *nura* «կրակ», «խարույկ», ուգարիտ *Nr* «կրակ», հին եբրայ. *ner, nir* «ճրակ» է<sup>7</sup>: Նույն տվյալները բերում է Ս. Մայզելը՝ արաբ. *nur* «լույս», «պայծառություն» <*nar* «կրակ» <*sem. \*nwr*, աքքադ. *nur* «լույս», ուգարիթ. *Nwr* «կրակ», *nyr* «լույս»<sup>8</sup>:

Գր. Ղափանցյանը *nar* արմատը համեմատում է բաբելոնյան *Naru* ջրային աստվածության, ապա՝ հիթիտ. *Nara* (հուն. *Nereus*-ից) - *\*narin > nurin* «нимфа», այնուհետև՝ աքքադ. *nar-u*՝ «գետ», և թարգմանում է Ծովինար՝ «ջրահարս», «գետի աստվածուհի», իսկ *nurin* տիկնիկ է (չուչել, чучело), որը հազել է կնոջ զգեստ և ջրվել է երաջտի ծամանակ՝ անձրև առաջացնելու համար: Ղափանցյանը *Dzovinar* թարգմանում է *ծովի նիս-*

<sup>7</sup> Տե՛ս *Иллич-Свитыч В.* Опыт сравнения ностратических языков, М., 1976, էջ 85:

<sup>8</sup> Տե՛ս *Майзель С.* Пути развития корневого фонда семитских языков, М., 1983, էջ 186:

Ֆա կամ ծովի աստվածուհի, որը ընդունում է կնոջ տեսք կամ կայծակի<sup>9</sup>:

Նախասլավոներենում *\*nur/\*nor*, *\*nuriti/\*noriti* հիմնական իմաստն է՝ սուղվել ջուրը, ընդերքը (нырять, погружаться вводу, связь с подземным локусом)<sup>10</sup>:

Հայ բանահյուսության մեջ «Սասնա ծռերի» Փովինարին կապում են հեքիաթների կերպարի՝ Փովյանի հետ, որը հրեղեն կին է, կայծակի և ամպրոպի աստվածուհի:

Փովինար անունը կազմված է երկու արմատից՝ *ծով* և *նար*: *Նարին* /*Նուրին* անվան մեջ նույն արմատն է՝ *նար*, ժամանակակից հայերենում՝ «ծով», «լիճ»: Այսպիսով, *Նարին*/*Նուրին* տիկնիկի անվան իմաստը համապատասխանում է Փովինար և Փովյան առասպելական կերպարներին:

Հին հուն. *νύμφη*՝ «հարսնացու», «օվկիանոսուհի» կամ «գետի էակ», բառի իմաստներից մեկը՝ «*куколка*» «(շերամի) հարսնյակ» կամ «թրթուր»<sup>11</sup>, ասես հաստատում է «нимфа» և *Նարին* տիկնիկի կապը, և քանի որ անձրևաբեր ծեսը սովորաբար ավարտվում է գետի ափին, *Ներեիս* (*Νηρηΐς*)՝ «ծովահարս»<sup>12</sup> տերմինը մոտ է *Անձրևի հարսի* ջրային գործառույթին:

Մ. Աբեղյանը կարծում է, որ Փովինարը և Փովյանը ի սկզբանե ոչ թե անձնանուններ էին, այլ կայծակի աստվածության մականուններ, և ջրային աստվածուհիների՝ Աստղիկի, Դերկետոյի և Իշտարի պատկերները նույնական են *Նարին*/*Նուրին*-ին՝ որպես «գեղեցիկ ջրահարսի», իսկ *Նարին*/*Նուրին* տիկնիկը նույնական է Փովինարին<sup>13</sup>: Այսպիսով, չնայած *Նարին*/*Նուրին*-ը գրականության մեջ հիշատակված չէ, բայց կարելի է նրան դիտարկել որպես Ջրային տիեզերքի աստվածուհի:

### **Խուրձկուլուլու տիկնիկի անվան ստուգաբանության շուրջ**

Եթե տիկնիկի հիմնական անունը *Նարին*/*Նուրին* է, ինչպես նշում են Մ. Աբեղյանը, Գր. Ղափանցյանը, ապա մյուսները կլինեն տարբեր բարբառային կազմավորումներ՝ որպես մականուններ կամ աստվածուհու գաղտնանուններ (մականուններ):

Ամենատարածված տարբերակներն են՝ *Խուրձկուլուլու*, *Խուրձկուլուլու*՝ Խարբերդում, *Խունձկուլուլու*, *Խուրձկուլուլու*՝ Վանում, *Խուրձկուլուրիկ*, *Խուչկուլուրա*, *Խուչկուլուրիկ*՝ Նոր Բայազետում (Գավառ)

<sup>9</sup> Տե՛ս **Капанцян Гр.**, նշվ. աշխ., էջ 292:

<sup>10</sup> Տե՛ս **Этимологический словарь славянских языков**, вып. 25, էջ 189, вып. 26, էջ 47, М., 1999:

<sup>11</sup> **Дворецкий И. Х.** Древнегреческо-русский словарь, М., 1958, էջ 1141, տե՛ս *νύμφη* «невеста» (հարս) 8. зоол. *νύμφη* «куколка или личинка», էջ 422 (տե՛ս **Гарибян А.** Русско-армянский словарь, Ер., 1968, տե՛ս «куколка». 3. հարսնյակ, շերամի հարսնյակ կամ թրթուր):

<sup>12</sup> Տե՛ս **Дворецкий И. Х.** Древнегреческо-русский словарь, էջ 1133. *Νηρηΐς* – Нереида (морская нимфа):

<sup>13</sup> Տե՛ս **Մ. Աբեղյան**, էջ 70 – 72:

և Շիրակում, *Հուշկուրուրու*՝ Ապարանում, *Ճոլի* Ղարաբաղում,<sup>14</sup> *Խունձկուրուրու*, *Խունձկուրուրու*, *Խուշկուրուրիկ*, *Խուրձկուրուրու*<sup>15</sup>, *Քուշ-քուրիզին*, *Քուշկուրիկիզ*<sup>16</sup>, *Քուշկուրիկ*<sup>17</sup> համշենահայերի մոտ: Տիկնիկի անվանումներում կարելի է առանձնացնել երեք արմատ՝ *խուձ*, *խուձ*, *խունձ*, *խուրձ*, *խուշ*, *կուրուրու*, *կուրուրիկ*, *կուրիկիկ*, *կուրիկիզ* և *քուրիզին*, *քուշ*:

Մ. Աբեղյանը տիկնիկի հիմնական անունը համարում է *Խուրձկուրուրու-ն* և բառի առաջին արմատը (*խուրձ*) մեկնաբանում է որպես *խրժիկ*՝ «տիկնիկ»: Նա *Խուշկուրուրու-ն* համարում է աղավաղված ձև և այնուամենայնիվ նշում, որ Էջմիածնում, Ապարանում, Խոյում, Ալաշկերտում, Վանում և այլ շրջաններում *խուրձիկը* տիկնիկ է և նշանակում է պաճուճապատանք «փաթաթված» էակ<sup>18</sup>:

Վասպուրականում տիկնիկին անվանում էին *Խունձկուրուրու* և «կրսեն թե Եվա տեսնելով որ իր մարդը Ադամ ամառուան շոքեն կը նեղուի տոլի թուփ մը անոր գլուխը կփաթթեր և տոլով ջուր լեցուցեր գլխուն ու զովացուցեր է ասկե մնացեր է մանուկներու այս սովորութիւնն ալ»<sup>19</sup>: Գր. Ղափանցյանը ընդունում է *xerdzkulu* կամ *xuchkululu* ձևերը, որոնք ձևավորվել են որպես *xerdzik* – «tiknik»<sup>20</sup>:

Մենք առաջարկում ենք ևս մի տարբերակ՝ մականունների ստուգաբանություն, հաշվի առնելով բարբառներին բնորոշ հնչյունների անկումը կամ փոխվելը: Եթե հիմնական տարբերակն ընդունենք *Խուրձկուրուրու*, ապա ունենք «խուրձ», «փունջ», «ծղոտե փունջ»: Այդպիսին ավելն է, որը կապկպում են կորեկի չոր ցողուններով, ինչը դառնում է տիկնիկի իրանը<sup>21</sup>:

Տիկնիկի անվան երկրորդ արմատը *կուրուրու* է՝ «կուրվել», «փաթաթել», «կապել»: Այնուհետև տիկնիկի անունը կարելի է մեկնաբանել որպես ոլորած ծղոտ՝ փաթաթված պատյանի (լաթերի) մեջ: Սա նշանակում է, որ տիկնիկի իմաստին՝ զարդարված ցախավել, ավելացել է հացահատիկի խուրձը, այսինքն՝ Դաշտի մայր, Հացահատիկի մայր:

<sup>14</sup> Վ. Բոդյան, նշվ. աշխ., էջ 495:

<sup>15</sup> Տե՛ս Ս. Սուրբասյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Եր., 1987, էջ 279:

<sup>16</sup> Տե՛ս Բ. Կուզնեցով, Համշենահայերի եւ հեմշիլների մշակոյթում պահպանուած պոնտական ժառանգութիւնը, Համշեն եւ համշենահայութիւն, Երևան-Պեյրոթ, 2007, էջ 187:

<sup>17</sup> Տե՛ս А. Погосян. Пережитки обрядов вызывания дождя у амшенскимх армян, Всесоюзная сессия, посвященная итогам полевых этнографических и антропологических исследований 1976 - 1977. Ер., 1978, էջ 172: Թեզերը հրատարակված են ռուսերեն: Հայերեն՝ *Քուշկուրիկ*:

<sup>18</sup> Տե՛ս Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 169:

<sup>19</sup> Վ. Գաբրիելյան, Հայ բուսաշխարհի, Երուսաղեմ, 1968, ԺԸ, էջ 236: Տողը դդումի տեսակ է, *տոլով*՝ չորացրած դդմից պատրաստած աման:

<sup>20</sup> Капанцян Гр. նշվ. աշխ., էջ 297, ծանոթ. 3:

<sup>21</sup> Արևմտյան Եվրոպայի շատ ժողովուրդներ հյուսել են տիկնիկ վերջին կամ առաջին խուրձից անվանելով *Դաշտի մայր* կամ *Հացի մայր*: Անձրը կանչելու համար լեռերը ծղոտից հյուսում էին տիկնիկ *Մաժաննա*: Նման գործառույթներ ունեին սերբական *Դոդոլան*, բուլղարական *Լագարկան* և այլն: Հայկական ծղոտե տիկնիկը (խուրձի տարբերակ) հագած էր զգեստ՝ փողկապված ճիլ խոտով կամ ոլորած թաց ծղոտով:

Բերենք մի քանի տող պարերգից. «*Խուշկուրուրիկն էկեր ա, / Շալէ շապիկ հագեր ա, / Երկնկուց ցող ա ուզում, / Գետնկուց պտուղ ա ուզում*»<sup>22</sup>:

Մեկ այլ տարբերակ՝ «*Խուճկուրուրուն մանամա, / Բարով-խերով անձրն գա, / Չոր խոր արտեր կանաչա*»<sup>23</sup>: Այս երկու տարբերակներում ընդգծվում է տիկնիկի հատկանիշը՝ որպես պտղատու էակ:

Համշենահայերի մեջ գրանցված են տիկնիկի մի քանի անուններ՝ *Կուշկուրիզին կ(խ)ուշկուր (տ)իզին, կ(խ)ուշկուր տիկին, կ(խ)ուշկուր(ի)կիզ կուշկուր աղջիկ, կ(խ)ուշկու(լույ) տիզ(ին)*: Ղզարի բարբառում *կուշկուր*՝ «հանգույց» է, «կապ», *տիկին* (տիկնիկ) – խաղալիք<sup>24</sup>: Այսպես, *Կուշկուր(տ)իզին* տիկնիկի անունը մեկնաբանվում է որպես ծղոտե կապ, խորձ կամ նման մի կապ: Կարելի է առաջարկել *Քուշկուրիկ* ստուգաբանության մեկ այլ տարբերակ, որը նույն իմաստային դաշտում է: *Կուշկուր* բառը բաղկացած է երկու արմատներից, որտեղ, ըստ Ս. Ս. Մայգելի, արաբ. *kus* «դղում» է, որի միջուկը հանում են, իսկ գունդը չորացնում են և օգտագործում որպես աման<sup>25</sup>: *Կուր* արմատը Ղզարի բարբառում նշանակում է ձեռք, բազուկ<sup>26</sup>: Ջանիկ գյուղի համշենահայերը տնետուն շրջելիս երգում էին թուրքերեն՝ «*Kushkurigin yar iste, / Allahdan yaghmur iste: (Քուշքուրիզին յար գուզե, / Ալլահից անձրն գուզե)*»<sup>27</sup>: Այսպիսով, ունենք «բնակավ ամանի»՝ *Շերեի տիկինի* իմաստը:

### Ծիսական տիկնիկ Պուպլատիկին

*Պորպատիկին, Պուրմատիկին*<sup>28</sup>, *Բյուրապատիկ*<sup>29</sup>, *Բուրբադիզ*<sup>30</sup>, *Պուրմատիկին*<sup>31</sup>, *Ուրբաթեկին*<sup>32</sup>: Անունը կազմված է երկու արմատից՝ *պուրպա, պուպլա, պորպա, պուրմա, բյուրա, բուրբա* և *տիկին, տիկ*:

Ըստ Մ. Աբեղյանի՝ «այս բառում *պուրպա* նշանակում է տիկնիկ

<sup>22</sup> Տե՛ս Ռ. Գրիգորյան, Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր, Եր., 1970, էջ 328:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 325: Հեղինակը ցիտում է՝ «Բյուրակն», շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1898, հ. 15:

<sup>24</sup> Տե՛ս Գ. Գևորգյան, Ղզար, Հայ ազգագրություն և բանահյուսություն (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 10, Եր., 1980, էջ 131, 137:

<sup>25</sup> Տե՛ս *Майзель С.* նշվ. աշխ., էջ 52: Հմտ.՝ տողով:

<sup>26</sup> Տե՛ս Գ. Գևորգյան, նշվ. աշխ., էջ 131:

<sup>27</sup> Ի. Կուզնեցով, նշվ. աշխ., էջ 187: Առաջին տարբերակը գրանցվել է Ջանիկ գյուղի վերաբնակիչներից, իսկ երկրորդը՝ Օրդու գյուղի բնակիչներից: Ազգագրագետ Մերգել Վարդանյանը բանավոր գրույցի ժամանակ ասաց, որ Թուրքիայում բնակվող համշենահայերը պնդում են, որ իրենք անձրևաբեր երգը երգել են թուրքերեն: Բայց, ըստ Ի. Կուզնեցովի գրառման, մարդիկ հիշում էին տիկնիկի այլ մականունը՝ *Կուշկուրուզին*:

<sup>28</sup> Տե՛ս Վ. Բղոյան, նշվ. աշխ., էջ 493:

<sup>29</sup> Տե՛ս Ռ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 327:

<sup>30</sup> Տե՛ս Ի. Կուզնեցով, նշվ. աշխ., էջ 187:

<sup>31</sup> Տե՛ս Մ. Թումաճան, նշվ. աշխ., հ. 1, էջ 14 - 15:

<sup>32</sup> Տե՛ս Վ. Բղոյան, նշվ. աշխ., էջ 493:

(հին. գերմ. *puppe*, ֆրանս. *poupee*)»<sup>33</sup>: Բայց հայերեն բազմաթիվ բառաբաններում պուրպ(ֆ)իկ-ը տիկնիկ է և ըստ երևույթին կապ չունի օտար բառի հետ:

Երկրորդ բառը տիկին է, ուրեմն՝ ստացվում է ոչ միայն տիկնիկ, այլև տիկնիկ-տիկին: Ջավախքում երաշտի ժամանակ երեխաները երգում էին՝ «Պուրպատիկն էկեր է, / Շալե շապիկ հագեր է»<sup>34</sup>:

Ծեսի առանձնահատկությունն է՝ տնեցիք ամաններով ջուր պատրաստելով հարցնում են՝ Էրթըկեն կուզեք, թե դոնեն: Եթե «դոնեն» ասացին՝ երդիկից են ջուր ածում *Պուրպատիկի* և տղայի վրա, իսկ եթե «Էրթըկեն» դոնից<sup>35</sup>:

Որպես օրենք՝ այցելուները իրավունք չունեին տուն մտնելու, քանի որ շեմը բաժանում է երկու սակրալ տարածք՝ ներսը և դուրսը:

Ծեսի այլ տարբերակ գրանցել է Կ. Գաբիկյանը: Երաշտի ժամանակ «մանուկներ յոթը երդիքեն մեյ մեկ բուռ խոտ առնելով սելեի մը մեջ կը դնեն, ցախավելին կոթեն ալ ձող մը անցընելով վրան լաթ մը կը գցեն, ու դոնե դուռ պտըտելով կը երգեն՝ «Պուլլատիկինն էկեր է, / Շալե շապիկ հաքեր է / Փեթկինն ետև կայներ է, / Ճերմակ ծովուն ջուր կուզե, / Սև հավու հավկիթ կուզե, / Փեթկինն միջուն պլլղուր կուզե»: Հետո տղոցն մին գլուխը կը ծռե, ընկերները սելեն գլխուն կը դնեն և սափորով ջուրը կը լցնեն: Տանտիկինը դուրս կուգա հավկիթ, յուղ, պլլղուր կուտա»<sup>36</sup>:

Նշենք, որ *Պուլլատ(ի)կինը* կանգնում է շտեմարանի մոտ և ուզում է բլղուր: Նրա կապը շտեմարանի և հացահատիկի հետ վառ ապացույց է, որ *Պուլլա Տիկինը* մարմնավորում է *Տիկնիկ Տիկինին*՝ հացահատիկի աստվածուհու կրկնօրինակին:

Փեթակը, բլղուրը, Ճերմակ ծովը կրկնվում են Չմշկածակի տարբերակում՝ «Պուլլատիկինն էկեր է, / Փետկինն ետև կայներ է, / Ճերմակ ծովուն ջուր կուզե, / Փետկի միջին պլլղուր կուզե»<sup>37</sup>: Ենթադրում ենք՝ Ճերմակ ծովը, երկինքն է, ջուրը՝ խափանող:

Ջավախքի, Շիրակի, Համշենի որոշ գյուղերում տիկնիկի անունն է *Բուրբաղիկ* կամ *Բուրբաղից*, (*Պուրբա(տ)ից(ին)*, *Պուրբից տիգին*: Ժողովուրդը այս մականունով ընդգծում է տիկնիկի բարձր կարգավիճակը:

Ընդլայնված ծիսական պարերգի տարբերակը Ծղրութ գյուղինն է (Ախալցխայից ոչ հեռու). «*Բյուրապատիկ բյուրին պատիկ, / Օսկե հատիկ ցորեն բշիկ, / Տե՛ր, թո՛ն, էրե, թո՛ն, թո՛ն, էրե, / Գարի հացը պո՛լ, պո՛լ էրե: / Բյուրապատիկ մը փայ կուզեմ, / Չուլ եմ հագի՝ փայ կուզեմ*»<sup>38</sup>: *Բյուրապատիկը* «ասում է»՝ «*Չուլ եմ հագի՝ փայ կուզեմ*»:

<sup>33</sup> Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 169:

<sup>34</sup> Տե՛ս Եր. Լալայան, նշվ. աշխ., էջ 249:

<sup>35</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 249:

<sup>36</sup> Կ. Գաբիկյան, նշվ. աշխ., էջ ԺԸ:

<sup>37</sup> Մ. Թումաճան, նշվ. աշխ., էջ 411:

<sup>38</sup> Ռ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 327:

Նշենք, որ բոլոր գրանցված տարբերակներում տիկնիկը նկարագրվում է զարդարված որպես հարս, նա ոչ թե մուրում, այլ պահանջում է նվերներ:

Նորից ընդգծվում է տիկնիկի գործառույթը որպես Հացահատիկի աստվածուհի, և հանդես են գալիս պարերգի նոր տողեր:

### Տիկնիկ Նարին/Նուրինի գաղտնի անունները՝ Շերեփ տիկնիկ, Չամչա Խատուն

Անձրևի հարսնացուի անունը հաճախ անհայտ էր, ուստի այն առարկան, որից այն պատրաստվում էր, անցնում էր տիկնիկի անվանը<sup>39</sup>: Սալմաստում տիկնիկին անվանում էին *Շերեփ-տիկնիկ*:

Տիկնիկի անվան տարբերակ է *Չամչա Խատունը*, որտեղ *չամչա*՝ իրան. *chamcha*, թուրք. *chemcha*՝ «մեծ գդալ» կամ «շերեփ»<sup>40</sup>, «քափքաշ», «հեղուկի չափանիշ»:

Ե. Լալայանը *Չամչիկ տիկնիկի* անունը նշում է որպես *Չամչա Խատուն*: Արցախում *չամչիկ* ասում են փայտյա փոքրիկ քամփչին, իսկ *Խատուն*՝ տիկնոջը<sup>41</sup>: Ուրեմն՝ քափքաշ գդալը (քամփչ) լաթերով փաթաթած կամ մանկական հագուստ հագցրած, պարանով կամ ճիլ խտտով գոտի ոլորած ծիսական տիկնիկի անունն է և հավասարագոր է համշենական քաշուկին՝ կարճ բռնակով շերեփ (համշ. *kushkur*՝ «բռնակ», «շերեփ»: Եղեսիայում տիկնիկի մականունը *Չյուչեկեյին է՝ Քայլող շերեփ*<sup>42</sup>:

Գավառական երգի մի քանի տարբերակներում հանդիպում ենք տիկնիկի նոր անվան՝ «*Կելե կեչեն էկեր է, / Պատին վըրա նըստեր է*»: Երգը ավարտվում է անեծքով: «*Ով որ հավկիթ մը չիտա նը, / Սն հավուն նոր չորանա*»<sup>43</sup>: Մ. Թումաճանը *Կելե կեչեն*-ն բացատրում է՝ «հավանաբար թուրքերենից է խաթարված, եկողաց - գացողաց, որ տոնական ծեսին էլ պատշաճ»<sup>44</sup>: Կարող ենք առաջարկել *քայլել, քոչել* տարբերակը. որպես քայլող էակ՝ տիկնիկը ինքը առաջնորդում է երթը:

### Ծիսական տիկնիկի և շիլայի անունների նույնացումը

Անձրևաբեր ծեսում հանդիպում ենք տիկնիկի և շիլայի անվան նույնացմանը: Սիրիահայերի շրջանում Քեսապի *Չեուչակայրն* (Քայլող շերեփ) տիկնիկին անվանում էին նաև *Ցնցող հարս (անձրև)*:

Դիմավորելով երթը՝ կանայք ձավար, ձեթ էին տալիս և միանում ե-

<sup>39</sup> Դաշտային արշավախմբի նյութեր (այսուհետև՝ ԴԱՆ), 1962, Սպիտակի շրջանի Համգաչիման (այժմ Մարգահովիտ) գյուղում օգտագործում էին շերեփ տիկնիկ պատրաստելու համար, բայց երբ երգում էին, նրան անվանում էին Նուրին:

<sup>40</sup> Տե՛ս **Սո. Մալխասյան**, Հայերեն բացատրական բառարան, Եր., 1945, էջ 9, չամչա:

<sup>41</sup> **Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, Եր., 1944, էջ 875:

<sup>42</sup> Բարբառ. *կելին, քելել* քայլել: Տե՛ս **Մ. Թումաճան**, նշվ. աշխ., էջ 349:

<sup>43</sup> Նույն տեղում, էջ 316: Մեկ այլ տարբերակ՝ էջ 349:

<sup>44</sup> Նույն տեղում, էջ 349, ծանոթ. № 1:



րեխաներին: «Երբ երթը հասնում էր աղբյուրի մոտ, տեղավորվում էին, հավաքված ճյուղերով կրակ վառում և եփում շիլա՝ *չէօւջա կայլըն*: Երեխաները ուտում էին՝ կրկնելով *էվտիւղէն հէվէ* (խաշած-եփած), և վերադառնում տուն»<sup>45</sup>: *Չէօւջա կայլըն* տերմինը հաստատում է տիկնիկի և շիլայի համընկնումը:

Համընկնում և շրջակա գյուղերում բնակիչները անձրևաբեր տիկնիկին անվանում են *Քաշուկ*: «*Kashuk, Kashuk, yagh isterum, /Allahdan gunes isterum (Գղալ, գղալ, եղ գուզեմ, / Ալլահից արև գուզեմ*<sup>46</sup>»:

Քաշիկ կամ գաշուկ թուրքերենում նշանակում է գդալ: Հայերենում քաշիկ նշանակում է պարան, քաշել, ձգել, նրա օգնությամբ քաշել ինչոր բան<sup>47</sup>: Դա կարող է լինել նաև ծակոտկեն գդալ, այսինքն՝ քամիչ գդալ, որով ջրից քամում-հանում են եփված բրինձ, ձավարեղեն կամ ուղղակի քաշովի ուտեստ, ջրի մեջ քաշած որևէ հացահատիկային քաշովի փլավ: Այսպես՝ համընկնակների բարբառում քաշուկը փոխառված է Պոնտոսի հույներից (*ilistirin*), հին հունարենում *illas, illis*-ը ոլորած պարան է, լատ. *kast*: Հույների *Կոշկովարա* ծիսական տիկնիկի անունը «խաշած», «շիլա», «քամել», «գտել», լատիշ. *kast, kasa*՝ «քամիչ», ռուս. «*каша*»<sup>48</sup>, մոտ է լիտ. *kos'ti, kos'iu*՝ «քամել», հուն. *koskinon*՝ «մաղ»<sup>49</sup>: Օրինակներն իրենց իմաստային միատարր դաշտով, քափքաշի, մեծ գդալի, քաշովու և պարանի հնդեվրոպական բառամթերքով ու տերմինաբանական հասկացություններով ընդհանուր են, որոնք թուրքերեն փոխառվել են հայերենից:

Տրապիզոնից Կրասնոդարի մարզ վերաբնակեցված հայերը անձրևաբեր ծեսը անվանում են *Գուձկուձուրա* կամ *Գուձա ուտելու օր*:

Ծիսական երթը կատարել են մի քանի աղջիկ: Ոչ մեծ փայտի ծայրին կապել են լաթի կտոր և տվել երթի առջևից գնացողի ձեռքը կամ երեխաներից ամենափոքրիկին, հազգրել են ցնցոտիներ ու դարձրել Անձրևի հարս՝ տալով *Ձուկձուրա* անունը: Երթը երգելով ու պարելով շրջել է տնետուն: Տանտիկիները դրամ, ալյուր, հավկիթ էին տալիս, ջրցողում մաղով՝ նմանեցնելով անձրևին: Արարողությունը ավարտվում էր գուձա ուտելով<sup>50</sup> Գուձա-ն ծիսական ուտեստ է, որը պատրաստում են ալյուրով, կաթով ու յուղով:

Միֆթերից գաղթած տրապիզոնցիների միջավայրում տիկնիկի, ինչպես նաև շիլայի անունը *Գուձա* էր<sup>51</sup>: «*Gudza, gudza, gudzгурidza, / Allahdan*

<sup>45</sup> Հ. Չոլաքեան, Քեասպ, հ. 2, Եր., 1995, էջ 329:

<sup>46</sup> Բ. Կուզնեցով, նշվ. աշխ., էջ 187:

<sup>47</sup> Տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 553:

<sup>48</sup> Տե՛ս Шанский Н. М., Иванов Вяч. Вс. и др. Краткий этимологический словарь русского языка, М., 1961, каша:

<sup>49</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>50</sup> Տե՛ս Ժ. Կ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 214:

<sup>51</sup> Բ. Կուզնեցով, նշվ. աշխ., էջ 187: Кузнецов И. В.. Заклинания от засухи амшенских армян // Советская этнография, № 1, М., 1991, էջ 83:

*arev kuzim, .../Ալլահից արև կ'ուզես*» : Երգը ավարտվում է անեծքով՝ «*Ուլ տա, ...*»։ Շատ տարածված ասացվածք է՝ *Գուձա, գուձա, գուձագուրիձա* և կառուցվածքով խիստ նման է «*Խավիժ, խավիժ, խավլլավիժ*»։

Այսպիսով, տեքստում նշվում է, որ գոհաբերությունը բաղկացած է եղել ծիսական շիլա-գուձա ուտելուց, որի անունը փոխանցվել է *Գուձա* տիկնիկին։

Արցախում տիկնիկի անունն է *Գողի*<sup>52</sup>, իսկ Գանձակում՝ *Կոտի*<sup>53</sup>, որ նշանակում են շերեփ կամ քամիչ, որին մի փոքրիկ փայտ են կապել՝ տիկնիկի ձեռքերը։ Ստացված կմախքը հարսնացուի պես են հագցրել։ Շերեփը կամ գդալը փաթաթում էին սպիտակ գլխաշորով և ստացվում էր երես։

Գողի / կոտի նշանակում է նաև փայտե աման, մեկ կոտ ցորեն ցանելու չափ։ Այս ամանը պետք է ունենար բռնակ՝ կոթ, որն այս ամանին շերեփի տեսք էր տալիս։

Ղարաբաղում կոտը նաև «կերակուր եփելու տեսակ մը դաշտային ձև է, ծառին կեղևը կը հանեն, զլանաձև ամանի մը ձևը կուտան, մեջը զանազան թարմ բույսեր կլցեն, և երկու ծայրերը գոցելով՝ տաք մոխիրում մեջ կթաղեն»<sup>54</sup>։ Ինչպես տեսնում ենք, տիկնիկի անունը համընկնում է կոտ/կոտի՝ «դաշտային կերակուր», անվան հետ՝ որպես ծիսական շիլա։

Երեխաները, շրջելով տնետուն, երգում էին՝ «*Կոտի, Կոտի, այ Կոտի, / Յուղ բերեք վարսը քսեք, / Աստծուն խնդրեք անձրև բերեք*»։ Վարդավառի տոնի ժամանակ, երբ ինչ-որ մեկի վրա ջուր էին լցնում, ասում էին՝ «*Կոտի, Կոտին էկել ա, / Ձեր դռանը չոքել ա, / ... Վերևից անձրև ա ուզում, / Ներքևից հաց ա ուզում*»<sup>55</sup>։ Գյուղերում հավատում էին արարողության ուժին։

*Գուձա, Քաշուկ, Չուկա, Գողի/Կոտի* անունները ցույց են տալիս՝ ինչից է պատրաստվել տիկնիկը, ինչպես նաև շերեփի, ծակոտկեն գդալի և ծիսական շիլայի կապը։

### **Ծիսական տիկնիկի մականուններ՝ Ալլապիտիկ, Չուչու մամա**

Ալլապիտիկ անունը տարածված է Խարբերդում։ Տնետուն շրջողների պարերը բաղկացած է երկխոսությունից՝ «*Ալլապիտիկն ի՞նչ կուզե, / Պրտուկեն պուլղուր կուզե, / Երկինքեն ալ անձրև կուզե*»։ Դրան հաջորդում է անեծքը՝ «Մատրաբազին աչքը կորնա»։ Մ. Թումաճանը բերում է տարբերակներ՝ *Ալլապիտիկ, Ալլապեթիկ, Ալլապրտիկ*, իսկ որոշ տեղերում՝ *Խարախանձողոգ*, և բացատրում, որ բոլորը նշանակում են մարդանման խրովիլակներ, որոնցով շրջում են։

<sup>52</sup> Տե՛ս **Ա. Ղազիյան**, Արցախ, ՀԱԲ, հ. 15, Եր., 1983, էջ 184։

<sup>53</sup> Տե՛ս **ԴԱՆ**, 1985, Գանձակ, գ. Միզիկ, գ. Գետաշեն։

<sup>54</sup> Նույն տեղում, **Հ. Աճառյան**, նշվ. աշխ., էջ 597։

<sup>55</sup> **Ս. Բ. Հարությունյան**, Դաշտային նյութեր, տետր IV, 1956, գ. Գնդեվագ։

*Ալլապիտիկ* անվանումը, հավանաբար, *կարմիր և տիկին* բառերի աղավաղված ձևերն են, այսինքն՝ *Կարմիր գույնի (զգեստով) տիկին*: Տիրուհի, Մեծ մայր հասկացության մեջ նկատելի են բարբառային անվանումները՝ *Չիչի Մամա, Չուչու Մամա, Մամա Չոթիկ*, որտեղ գերիշխող են *Մամա*՝ մայր, տատիկ, խաթուն, տիկին իմաստները: *Չոթիկ* մասնիկը, ըստ Սո. Մալխասյանցի, կապ ունի ճիճի, ճիճի-պիճի, ճիճող՝ գեղեցիկ, հագնված, բծավոր հագուստովբառի հետ, որը բարբառներում համապատասխանում է գեղեցիկին, իսկ ըստ Վ. Պոզայանի բառարանի՝ ճիճին բացատրվում է որպես խաղալիք, փաթաթված և զարդարված իր<sup>56</sup>:

Չի բացառվում, որ զարդարանք-ը վերաբերում է զարդարված, հագցված գդալին, քամիչին կամ շերեփին, իսկ մաման՝ նրա կարգավիճակին:

Բուքանիայի շրջանում գրանցվել է մի տարբերակ, որտեղ տիկնիկին անվանում էին *Չուչու մամա*: Երեխաները մի էակ էին պատրաստում խաչաձև փայտիկներից ու ցնցոտիներով փաթաթված երաշտի դեմ:

Այս մարդաձև խրովիլակը համարվում էր չարք: Երգում էին. «*Չուչու Մամա, հու Մամա, / Աստուգ մե արգիվ կուզիմ, / Գետնեն բերեքեք կուիմ, / Սև հավեն հավկիթ*»:

Մեկ այլ տարբերակ էլ կար: Կարինի որոշ գյուղերում երաշտի ժամանակ փոխանակ տիկնիկ պատրաստելու՝ ընտրում էին կանանցից մեկին, շորերը հանում՝ թողնելով Կնոջը խաչի հետ, ապա ծակում էին շղարշով: Նա կոչվում էր *Չիչի մամա*: Երթը բաղկացած էր լինում 10-20 մասնակիցներից: Մեկը թմբուկով էր, օգնականներն ունեին տոպրակներ՝ հաց, աղ, ձավար հավաքելու համար, և մի մետաղե աման՝ կարագի համար:

Երթը, պարելով մետաղյա ամանի հարվածների տակ, կանգ էր առնում յուրաքանչյուր տան դիմաց և երգում. «*Չիչի Մաման ի նչ կուզե, / Երկնքե ամպեր կուզե, / Չիչի Մաման ի նչ կուզե, / Աստոնու յայ անրջն (անձրև) կուզե*»: Տանտերերը դուրս էին գալիս ուտելիքներով և ոտքից գլուխ ջրում երթի մասնակիցներին: *Չիչի Մաման* սկսում էր մանր ցնցվել՝ ընդօրինակելով հորդառատ անձրևը:

\* \* \*

Ասվածը վկայում է, որ *Նարին/Նուրին* պտղաբերության հացահատիկի Մայր աստվածուհին է՝ *Տիկին, Մամա, Խաթուն*: Նրա կրկնօրինակը (կողը) տիկնիկի տեսք է՝ ցախավել, ծղոտե խուրձ, շերեփ, գդալ: Տիկնիկի մականունը համընկնում է ծիսական շիլայի հետ:

Տիկնիկի անվան և մականունների ստուգաբանությունը հնդեվրո-

<sup>56</sup> Տե՛ս Վ. Բոդյան, նշվ. աշխ., էջ 53 – 54:

պական կամ նոստրատիկ է՝ \*ner/\*nor, և առնչվում են կանանց ջրային առասպելական էակների հետ, իսկ սուգում բայը՝ \*nuriti «нырять» կապ ունի *Նուրին* անվան հետ: Ըստ հնդեվրոպական առասպելական սյուժեների ժամանակագրության՝ Մեծ Մոր կարգը, կապված ջրի և կրակի հետ, թվագրվում է երրորդ մակարդակին՝ VIII – VI դդ. մ.թ.ա: Առասպելի աշխարհագրությունը ցույց է տալիս, որ այն ձևավորվել է Մերձավոր Արևելքում՝ վաղ հնդեվրոպացիների միջավայրում, և Մեծ աստվածուհին ընդօրինակել է Կույս արարչի գործառույթը՝ ապահովելով պտղաբերություն և առատություն:

**ЭММА ПЕТРОСЯН – Опыт этимологии прозвищ обрядовой куклы Нарин/Нурин.** – Одним из обрядов вызова дождя при засухе считается изготовление куклы Невесты дождя и вождение ее по селу (от дома в дом) с пением и плясками и выспрашиванием пищи для ее “кормления”. Прозвище Невеста дождя (*Andzrevi Hars*) можно толковать как Невеста Громовержца. Обряд завершается трапезой участников и потоплением куклы как соединения ее с Женихом – Дождем. В индоевропейской мифологии этот сюжет называется «Небесная свадьба».

Основным именем куклы принято считать *Нарин/Нурин*. Семантика имени *Нарин/Нурин* индоевропейская или ностратическая – \*ner/\*nor и связана с женскими мифологическими существами. Этимология имени восходит к нострат. \*nara – ‘огонь’ или хеттск. *Nara* (от др.греч. *Nereus*) – \*narin>nurin – ‘морская нимфа’, ‘невеста’. По всей вероятности это ее **тайное имя** как Богини плодородия, Мать-земли.

В разных регионах был свой способ изготовления куклы: наряжали невестой метлу, обворачивали половник или ложку, связывали накрест палочки или пучок соломы, наряжали девочку или взрослую женщину. Предметы, из которых изготавливали кукол, дали название им как прозвищ – **явное имя**, как это имеет место в мифологии многих народов.

Прозвище куклы *Chamcha Khatun*, как дублера Богини, восходит к иранск. *chamcha* – ‘половник, большая ложка’ и *Khatun* ‘Госпожа’. Прозвище Кукла-половник указывает на предмет, из которого изготовлена кукла. Прозвище *Khurdzkululu* образовано от *khurdz* – ‘сноп’ и *kululu(el)* ‘связка’, т. е. ‘пучок соломы’. Таковой является метла. Варианты имен куклы *Kashuk*, *Gudza*, *Koti/Godi*, *Chomcha*, *Chomcha kelen* указывают на идентичность предметов, из которых изготовлена кукла и названия ритуальной каши, а также меру порции. Так выстраивается семантический ряд прозвищ (кодов) богини Нарин/Нурин.

Согласно хронологии сюжетов индоевропейской мифологии, формирование ритуала Великой богини, имеющей отношение к воде и огню, относится к третьему хронологическому уровню VIII-VI тыс. до н. э. География мифа указывает, что он зародился на Ближнем Востоке в среде ранних индоевропейцев, причем Великая богиня перенимала функции Девы творения, обеспечивающей плодородие и изобилие.

**Ключевые слова:** засуха, дождь, процессия, кукла, песня-пляска, жертвоприношение

**EMMA PETROSYAN – On the Etymology of the Nicknames of the Ritual Doll Narin / Nurin.** – One of the rituals to call for rain in drought consider to make a doll of the Bride of the Rain, lead it around the village (from house to house) with sing, dance and ask for food to feed” it. The nickname Bride of the Rain is possible to interpret as

the Bride of the Thunderer.

The ceremony ends with a meal for the participants and the drowning of the doll as a connection with the Bridegroom – the Rain.

This plot is called "Heavenly Wedding in the Indo-European mythology". The main name of the doll usual is considered Narin/Nurin.

The semantic of the name Narin/Nurin is Indo-European or Nostr. – \**ner/nor* and associates with the female mythological creature. The etymology of the name goes back to Nostr. \**nara* - 'fire' or Hitt. Nara (from ancient Greek *Nereus*) - \**narin* > *nurin* - 'sea nymph', 'bride'. Probably, the secret her name is the Goddess of fertility, Mother Earth. Different districts have their own way of making dolls: they dress up a broom for a bride, wrap a ladle, a spoon, tie sticks or a bundle of straw crosswise, or dress up a girl or an adult. The objects from which the dolls made, give them the name as a nickname - an obvious name, as is the case in the mythology of many peoples. The nickname of the *Chamcha Khatun* doll, as the double of 'ladle, large spoon' and *Khatun 'Mistress'*.

The nickname Soup Doll refers to the object from which the doll is made. The nickname *Khurdzkululu* is derived from *khurdz* - 'sheaf' and *kululu (el)* 'bunch', that is, 'bundle' of straw. Such is the broom. Variants of the names of the doll *Kashuk*, *Gudza*, *Koti / Godi*, *Chomcha*, *Chomcha kelen* indicate the identity of the objects from which the doll is made and the names of the ritual porridge, as well as the portion size.

This way builds the semantic series of nicknames (codes) of the goddess Narin / Nurin.

According to the chronology of the plots of Indo-European mythology, the forming of the ritual of the Great Goddess relation to water and fire belongs to the third chronological level of the 8th-6th Millennium B.C.

The geography of the myth indicates that it originates in the Middle East among the early Indo-Europeans, and the Great Goddess took over the functions of the Virgin of Creation, providing fertility and abundance.

**Key words:** *drought, rain, procession, doll, song, dance, sacrifice*